

ԳՐԱԼՈՍՈՒԹՅՈՒՆ և ՔՆՆԱԴԱՑՈՒԹՅՈՒՆ

Հ. Կ. ԿՈՒՍԻԿՅԱՆ. ՈՒՐՎԱԳԾԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

ՍՍՌՄ ԳԱ Հրատարակչություն, 1959¹

Հայագիտությունը և նրա բաղադրիչ մասը կազմող հայ քերականագիտությունը դարերի պատմություն ունեն։ Ավելի քան 1500 տարի գիր ու գրականություն ունեցող հայոց լեզվի քերականությունը շատ է ուսումնասիրվել հայ, ռուս և օտարազգի գիտնականների կողմից։ Տարբեր ժամանակներում գրվել են մեծ ու փոքր արժեքավոր աշխատություններ, ուսումնասիրվել են քերականագիտական բազմաթիվ խնդիրներ, մշակվել են պատմական քերականության շատ հարցեր։ Մակայն, որքան էլ զարմանալի է, մինչև օրս չի գրվել հայերենի պատմական քերականությունը, որի խիստ կարիքն զգացվում է շատ վաղուց։

Անվանի հայագետ, պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանի «Ուրվագծեր հայ գրական լեզվի պատմական շարահյուսության» աշխատությունը, որ վերջերս հրատարակել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան, հայերենի պատմական քերականություն ստեղծելու առաջին և հաջողված փորձն է։

Շատ մեծ է պատմական քերականության, որպես լեզվի զարգացման ներքին օրենքների մասին գիտության գերը։ Նրա անմիջական խնդիրն է՝ պարզել, թե ինչպես են առաջացել լեզվի քերականական կառուցվածքը, բառապաշարը հնչյունական սիստեմն ու գիրը, մի խոսքով, ցույց տալ լեզվի հին վիճակի աստիճանական ու պատմական փոփոխությամբ՝ նոր վիճակի առաջացումը։

Պրոֆ. Հ. Կուսիկյանի աշխատությունը նվիրված է հայոց լեզվի պատմական քերականության համեմատաբար քիչ մշակված և շատ կարևոր բնագավառին՝ շարահյուսությանը։

Ճիշտ կերպով նշելով, որ լիակատար պատմական շարահյուսություն կարելի է ստեղծել միայն շարահյուսական բոլոր հարցերի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո և այն էլ հայագետների կոլեկտիվ ջանքերով, հեղինակը սույն աշխատությամբ իր առջև դնում է, ինչպես ինքն է ասում, յի համեստ խնդիր՝ տալ հայոց լեզվի շարահյուսության զարգացման ուրվագծերը, ընդհանուր գծերով և պատմական տեսանկյունով ներկայացնել նրա առանձին կողմերը։ Հեղինակը, սակայն, շատ է դուրս եկել այս «համեստ» խնդրի շրջանակից, ուսումնասիրության ոլորտի մեջ առնելով ոչ միայն պատմական շարահյուսության, այլև պատմական ձևաբանության, հայոց լեզվի պատմության, ընդհանուր լեզվաբանության և առհասարակ հայագիտության համար կարևոր նշանակություն ունեցող շատ ու շատ հարցեր։ Եվ այդ շատ բնական է, քանի

¹ И. К. Кусикьян. Очерки исторического синтаксиса литературного армянского языка. Изд. АН СССР, 1959, 164 стр.

որ լեզվի, իբրև մեկ ամբողջական հասարակական երևույթի բաղկացուցիչ ամեն մի բաժին մյուսներից մեկուսացած ու առանձին գոյություն չունի, լեզվական երևույթները գտնվում են փոխադարձ սերտ կապի մեջ:

Նախապես պարզելով հայոց լեզվի պատմական շարահյուսության ուսումնասիրության խնդիրներն ու մեթոդները և ըստ արժանվույն գնահատելով այդ բնագավառում մինչև այժմ կատարված աշխատանքը, պրոֆ. Կուսիկյանը իր աշխատության յոթ գլուխների մեջ բավականաչափ հիմնավոր ներկայացնում է մեր լեզվի շարահյուսական կառուցվածքի զարգացումը՝ սկսած նրա հնագույն վիճակից մինչև արդի վիճակը:

Հայոց լեզվի պատմական շարահյուսության հարցերը հեղինակը քննում է ըստ հայերենի զարգացման հինգ շրջանների՝ հնագույն (մինչև V դարը), հին (V—XII դարեր), միջին (XII—XVII), նոր (XVII—XIX դարեր) և նորագույն (XIX—XX դարեր):

Աշխատության սկզբում պրոֆ. Կուսիկյանը նախ համառոտակի քննության է առնում հայ ժողովրդի ու նրա լեզվի կազմավորման և մի քանի այլ հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն նախագրային հայերենի քերականական կառուցվածքի առանձնահատկությունները ճիշտ պատկերացնելու համար: Հենվելով պատմական տվյալների վրա և ուսումնասիրելով նախագրային շրջանից մեզ հասած ֆոլկլորային նյութերի լեզուն, հեղինակը պարզորոշ ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը կազմավորվել է հին Հայկական տերիտորիայի վրա ապրող այն ցեղերից, որոնք խոսել են հնդեվրոպական լեզուներով: Հայոց լեզվի կազմավորման պրոցեսն սկսվել է նախքան մեր դարաշրջանի առաջին հազարամյակից և տևել մինչև երրորդ դարը մ. թ. ա.: Հիմնավորապես հաստատելով, որ մ. թ. ա. III—I դարերում հայոց լեզուն ուներ իր ձևավորված քերականական կառուցվածքը, պրոֆ. Կուսիկյանը հենց այս շրջանից էլ սկսում է հայ համընդհանուր լեզվի շարահյուսության ուսումնասիրությունը:

Հայտնի է, որ ամբողջ նախնադարյան շրջանի լեզվական վիճակն արտահայտող միակ աղբյուրը ֆոլկլորային այն սակավաթիվ հատվածներն են, որոնք տեղ են գտել մեր պատմիչների և առաջին հերթին մեր պատմահոր՝ Մովսես Խորենացու երկերում: Քննության առնելով Խորենացու Պատմության մեջ եղած 12 ֆոլկլորային հատվածների, այլև V դարի պատմիչ Ագաթանգեղոսի և Գրիգոր Պահլավունու (XI դար) երկերում եղած ժողովրդական բանահյուսության նմուշների լեզուն, հեղինակը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ դրանց մեջ խոսքի շարահյուսական կառուցվածքը հնդեվրոպական բնույթ ունի, բառապաշարի մեջ գերակշռում է հնդեվրոպական շերտը: Ֆոլկլորային այդ հատվածների պարզ և բարդ նախադասությունների վերլուծությունը հեղինակին լայն հնարավորություն է տվել ոչ միայն ներկայացնելու շարահյուսական կառուցվածքը, որ շատ կարևոր է, այլև որոշելու նրա զարգացման տեղեկեցները, որ նույնպես ոչ պակաս հետաքրքրական է: Այդ հատվածների լեզուն շարահյուսական շատ ընդհանրություններ ունի ժամանակակից խոսակցական լեզվի հետ, նրանում պահպանված են ժամանակի կենդանի լեզվի գործուն նորմաները, որ ինքնին շատ ուշագրավ երևույթ է գրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի շարահյուսական ակունքները որոշելու տեսակետից: Վերլուծելով պարզ նախադասությունների կառուցվածքը, պրոֆ. Կուսիկյանը գրում է. «Բերված բոլոր փաստերը ցույց են տալիս, որ հնագույն շրջանի պարզ նախադասության կառուցվածքը հիմնական գծերով պահպան-

վել է մինչև մեր օրերը, թեև ավելի քան քսան դարերի ընթացքում հոլովման և խոնարհման սիստեմի մեջ տեղի են ունեցել ձևաբանական փոփոխություններ» (էջ 16)։ Հայոց լեզվի նախագրային շրջանի շարահյուսական կառուցվածքի համար բնորոշ են՝ համադրական բնույթը, բայական և անվանական նախադասությունների առկայությունը՝ առաջինի գերակշռությամբ, որ ապացույց է այն բանի, թե մեր լեզուն մինչև այդ վիճակին հասնելը անցել է մըշակման ու զարգացման մի շրջան ևս (երբ ավելի գերակշռում էր անվանական նախադասությունը), երբեմն բայի դիմավոր ձևերի փոխարեն դերբայների գործածությունը, որը հանդիսանալով հետագա բաղադրյալ ձևերի սաղմը, միջին հայերենում և աշխարհաբարում առաջ բերեց վերլուծական ձևեր՝ որակական փոփոխություն մտցնելով շարահյուսության մեջ։ Նախադասության անդամների շարահասությունը հարաբերական իմաստով եղել է ազատ, ինչպես հնդեվրոպական բոլոր լեզուներում, առկա էր նախադասության անդամների կապակցության երեք ձև՝ համաձայնություն, խնդրառություն և հոլովառություն։ Բարդ նախադասությունների տեսակները ցույց են տալիս, որ նրանք բազմազան են ինչպես իրենց բնույթով, այնպես և կապակցության ձևերով։ Հոգերի և նախադիր մասնիկների գործածությունը հնարավորություն է տվել փոփոխել բառակապակցության միջոցները, շեշտել նախադասության առանձին անդամներ, որով և՛ յուրահատուկ ճկունություն մտցնել շարահյուսության մեջ։

Հնագույն շրջանի հայոց լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա շարահյուսական կառուցվածքը պրիմիտիվ բնույթ չի ունեցել, և հենց այդ կառուցվածքն էլ հիմք է դարձել հետագայում՝ IV դարի վերջին և V դարի սկզբին կազմավորված գրական լեզվի՝ գրաբարի համար։

Մանրազնին ուսումնասիրելով V դարի հայոց լեզվի շարահյուսությունը՝ հեղինակը բազմաթիվ համոզիչ օրինակներով ցույց է տալիս, որ այն ամբողջությամբ վերցրած, քիչ է տարբերվում նախորդ շրջանի լեզվի շարահյուսական կառուցվածքից, թեև նկատելի ոչ քիչ նոր երևույթներ են առաջացել նրա մեջ (ենթակայի արտահայտման ձևերի բազմազանություն, նախդիրների լայն կիրառություն, հոգերի լայն տարածում, պարագաների արտահայտման ձևերի ավելացում և այլն)։ Մերժելով գրաբարի մասին եղած սխալ ու հակադիտական տեսակետները (գրաբարը որպես լեզու ստեղծվել է V դարում՝ անհատ մարդկանց ջանքերով, իբրև «ոստանիկ» լեզու, նա անհասկանալի էր ժողովրդին և այլն), պրոֆ. Կուսիկյանը նոր փաստերով հաստատում է, որ այդպիսի մշակված լեզուն չէր կարող ստեղծվել միանգամից, կարճատև ժամանակաընթացքում, որ V դարի «հայկական գրավոր հուշարձանների լեզվական նյութը պետք է գիտել սոսկ որպես հայոց լեզվի զարգացման երկրորդ շրջանի նյութ»... (էջ 36, ընդգծումը իմն է, — Ա. Գ.)։ Հինգերորդ դարի թե՛ թարգմանական և թե՛ սեփական հարուստ գրականության լեզվի ուսումնասիրությունը պարզում է, որ այդ շրջանի գրական հայերենը միևնույն որակով չի հանգես գալիս բոլոր երկերում և նույնիսկ միևնույն հեղինակի տարբեր գործերում, որ ձևաբանական, բառային ու շարահյուսական զուգահեռ ձևեր կային լեզվական միևնույն իրողության համար։ Բառակապակցության գրաբարյան սովորական ձևերին զուգահեռ նոր ձևերի (գերազանցապես բարբառային ծագում ունեցող) առկայությունը առանձնապես նկատելի է Մաշտոցի «Կարոյի հաջորդ սերնդի՝ Նղիշեի, Փալստոս Բուզանդի և Ղազար Փարփեցու

երկերում: Հենց որակական այս փոփոխություններն են, որ սկսած V դարից, աստիճանաբար մտնելով լեզվի մեջ, հետագայում ամբողջությամբ պետք է փոխեն լեզվի որակը:

V դարի վերջերին առաջանում է հունաբան դպրոցը, որի ներկայացուցիչները դրական շատ բան անելով հանդերձ՝ ձգտում են արհեստականորեն փոփոխություն մտցնել հայերենի մեջ, մեծ մասամբ հունարենի լեզվական իրողությունները մեխանիկորեն մտցնել հայոց լեզվի մեջ, վերջինիս նորմաները հարմարեցնել հունարենին: Շուրջ երկու դար տևող այդ ջանքերն իզուր անցան, հիանալի կերպով հաստատելով, որ լեզուն կարող է զարգանալ միայն բնական ճանապարհով, ներքին օրենքների ծավալմամբ, որ արհեստական ամեն մի նորամուծություն, վերջին հաշվով, կրախի է մատնվում:

Ուսումնասիրելով մեր լեզվի զարգացման հաջորդ էտապի՝ VI—XII դարերի շարահյուսական կառուցվածքը և շատ բնորոշ օրինակներ բերելով Հովհան Մամիկոնյանի (VII դար), Հովհան Ալմենցու (VIII դար), Հովհան Դրասխանակերտցու (IX դար), Թովմա Արծրունու (X դար), Գրիգոր Մագիստրոսի (XI դար) երկերից, պրոֆ. Կուսիկյանը նշում է սրանցից յուրաքանչյուրի շարահյուսական (և ընդհանրապես լեզվական) առանձնահատկությունները, մեզ համոզում, որ հիմնականում պահպանվել է գրաբարի շարահյուսական կառուցվածքը, «6—12 դարերի ընթացքում հայ լեզվի շարահյուսության մեջ տեղի են ունեցել ոչ մեծ փոփոխություններ» (էջ 100), որ եղած փոփոխությունները արդյունք են գրական լեզվի մեջ ժողովրդի կենդանի խոսքի ներթափանցման և ոչ թե «կլասիկ լեզվի աղավաղման», ինչպես ենթադրել են հայագետներից ոմանք:

Առհասարակ նկատելի է, որ ժողովրդական լեզվի տարրերը շատ սակավ են ներթափանցել գրաբար գրականության մեջ: Դրա պատճառներից մեկը, ինչպես ճիշտ կերպով նկատում է հեղինակը, այն է, որ շատ ավելի տարածված լինելով պատմության, փյուխոփայության, աշխարհագրության, մաթեմատիկայի, քերականության և աստվածաբանության երկերի ժանրերը, պակասում էր գեղարվեստական գրականության ժանրը, որի մեջ ժողովրդի կենդանի խոսքը իր բազմազանությամբ անհամեմատ ավելի հեշտությամբ է ներթափանցում:

Աշխատության մեջ լավ է տրված միջին հայերենի (XIII—XVI դարեր) շարահյուսության հիմնական գծերի բնութագրումը: Շատ ուշադրավ այլ մտքերի հետ հատուկ ուշադրության արժանի է հեղինակի այն միտքը, թե սկսած XII դարից առաջանում է միջին հայերենի երկու հոսանք, սկսվում է գրական լեզվի երկու տարատեսակների՝ ձևավորման պրոցես: «Ճիշտ չի լինի կարծել, թե միայն այդ (կիլիկյան, — Ա. Գ.) գրական լեզուն է մտնում միջին հայերեն հասկացության մեջ, քանի որ մի շարք ֆեոդալական իշխանությունների բաժանված Կենտրոնական Հայաստանում էլ ևս տեղի է ունեցել մեկ ուրիշ միջին հայերենի կազմավորման համանման պրոցես՝ «Ում» ճյուղի բարբառների հիման վրա» (էջ 102), սակայն այս վերջինի համար հասարակական-քաղաքական պայմանները նպաստավոր չէին (սելջուկների բարբարոսական արշավանքին հաջորդեց մոնղոլականը, պարսկական և օսմանյան բռնապետական ռեժիմի հաստատումը և այլն): Միայն Հայաստանի այն փոքր մասում, որ զրտնրվում էր Վրաստանի Թամարա թագուհու տիրապետության տակ, որոշ չափով աշխուժություն ապրեց հայ մատենագրությունը և նախադրյալներ ստեղծ-

վեցին հետագա նոր գրական լեզվի՝ աշխարհաբարի կազմավորման համար: Բարձրանալով Կիլիկիայի բարբառի հիմքի վրա, միջին հայերենը անհամեմատ շատ է վերցրել գրաբարի քերականական ձևերը: Փաստորեն «տեղի է ունեցել կիլիկյան բարբառի խաչավորում գրաբարի հետ, որի հետևանքով աստիճանաբար կազմավորվել է միջին հայերենը» (էջ 98): Միջին հայերենի շարահյուսությունը գրաբարի հետ շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ՝ զգալիորեն տարբերվում է նրանից, որն արտահայտվում է՝ որոշիչի իր որոշյալից նախադաս գործածությամբ, նրանց միջև համաձայնության (թրվով, հոլովով) վերացմամբ, որոշիչ և անորոշ հոգերի դերի ուժեղացմամբ և այլն:

Առանձնակի քննության նյութ դարձնելով արևելահայ աշխարհաբարի շարահյուսական կառուցվածքը, պրոֆ. Կուսիկյանը նախ ներկայացնում է աշխարհաբարի զարգացման պատմա-հասարակական պայմանները, կուլտուրայի օջախների հիմնումը Հայաստանից դուրս՝ հայ գաղութներում (Թեոդոսիա, Բերլինսի, Կալկաթա, Վենետիկ, Պետերբուրգ, Մոսկվա, Լվով) և նրանց կարևոր դերը հայոց նոր գրական լեզուների (արևելահայ և արևմտահայ) մշակման ու զարգացման գործում, ապա՝ XIX դարի կեսերին վերջնականապես ձևավորված աշխարհաբարի շարահյուսական առանձնահատկությունները: Այդ առանձնահատկություններից են, օրինակ, այն, որ իբրև ենթակա սկսեց հանդես գալ ամեն մի խոսքի մաս, մինչև իսկ դերբայը, ենթական գրվում է միայն ուղղական հոլովով և ոչ թե ուղղական, սեռական ու տրական հոլովներով, ինչպես գրաբարում էր, ստորոգյալն արտահայտվում է բազմազան ձևով, ավելի է ծավալվում կապերի ու կապական բառերի գործածությունը, էական փոփոխության է ենթարկվում բայի սիստեմը (եղանակների ու ժամանակների ավելացում, երկրորդական բաղադրյալ ժամանակների առաջացում, կրավորական նոր ձևի ստեղծում և այլն), առաջանում են պարագաների արտահայտման նոր ձևեր, ավելի է տարածվում բարդ ստորագասական նախադասության տեսակը, փոխվում է նախադասության անդամների շարահասությունը և այլն:

Մի առանձին գլխով ամփոփելով իր ասածները և հանրագումարի բերելով ուսումնասիրության արդյունքները, հեղինակը վերջում հանգում է մի քանի ընդհանուր և շատ կարևոր եզրակացությունների, որոնք հիմնված են մեծաքանակ փաստերի համակողմանի ու խոր վերլուծության վրա և արդյունք լեզվական երևույթների մանրակրկիտ հետազոտման:

Լեզվի տարրեր կողմերը (ձևաբանություն, հնչյունաբանություն, շարահյուսություն, բառապաշար) զարգանում են ոչ հավասարաչափ, դրանցից յուրաքանչյուրը փոխվում է միայն իրեն հատուկ ներքին օրենքներով, սակայն մյուսների հետ ունեցած սերտ կապի պայմաններում, շարահյուսական շատ իրողություններ բավականաչափ դիմացկուն են և դարերի ընթացքում փոփոխության չեն ենթարկվել, իսկ ոչ քչերն էլ, ընդհակառակը, զգալիորեն փոխվել են: Հայոց լեզվի շարահյուսությունը չի ենթարկվել շրջակա լեզուների ազդեցությանը, ինչպես օրինակ, բառապաշարը: Շարահյուսության հիմնական նորմաներն ունեն հայկական բնույթ և պահպանվել են դարերի ընթացքում՝ հասնելով մինչև մեր օրերը: Շարահյուսական որոշ նորմաներ գործել են մեր լեզվի զարգացման բոլոր շրջաններում, դրանցից է, օրինակ, նախադասության անդամների ազատ շարահասությունը թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասությունների մեջ:

Վ. Ի. Լենինը սովորեցնում է, որ այս կամ այն հարցին գիտականորեն մոտենալու տեսակետից ամենակարևորն է՝ «... շմոռանալ հիմնական պատմական կապը, յուրաքանչյուր հարցին նայել այն տեսակետից, թե ինչպե՛ս է որոշ երևույթ պատմության մեջ ծագել, իր զարգացման ընթացքում ի՛նչ զլխավոր էտապներ է անցել այդ երևույթը, և նրա զարգացման տեսակետից նայել, թե տվյալ բանն ի՛նչ է դարձել այժմ» (Լենին, Երկեր, հ. 29, էջ 582)։ Հենց այսպիսի մոտեցում է ունեցել պրոֆ. Կուսիկյանը իր այս աշխատության մեջ, որը սկսած է համարել գրքի ամենամեծ արժեքը։

Լեզվական երևույթների նկատմամբ ունենալով պատմական մոտեցում, հեղինակը շարահյուսական այս կամ այն երևույթը քննում է համեմատելով մի կողմից՝ գրաբարի, միջին հայերենի, բարբառների, արևելահայ ու արևմտահայ գրական լեզուների և մյուս կողմից՝ հնդեվրոպական լեզուների համապատասխան երևույթների հետ, նշում նրանց կապը, ընդհանրություններն ու որակային տարբերությունները։ Այս նշանակում է, որ գրախոսվող աշխատությունը արդեն է ոչ միայն պատմական, այլև համեմատական ուսումնասիրության։

Անպայման ուսանելի է այն, որ պրոֆ. Կուսիկյանը հարցերը քննելիս գիտական մեծ բարեխղճությամբ գնահատում է գրական այն հսկայական գործը, ինչ արվել է հայագետների կողմից տարբեր ժամանակներում, անշուշտ, քննադատելով ու մերժելով սխալ ու անընդունելի տեսակետները։

Հեղինակը կարողացել է թե լավ ներկայացնել շարահյուսական նորմաների փոփոխման պրոցեսները և թե հաջողությամբ պարզել դրանց պատճառները։ Նա ցուցաբերել է մեծ զգուշություն. բոլոր այն դեպքերում, երբ գործ է ունեցել դեռևս անհրաժեշտ չափով շուտումնասիրված լեզվական իրողությունների հետ, հենվելով մեծաքանակ փաստերի վրա, ներկայացրել է միայն նրանց զարգացման տենդենցները, իսկ այն դեպքում, երբ հնարավոր չի եղել գտնել շարահյուսության մեջ տեղի ունեցած փոփոխության պատճառները, — բավարարվել է միայն ըստ լեզվի զարգացման տարբեր շրջանների շարահյուսական նորմաների նկարագրությամբ։

Մենք մի երկու ցանկություն ունենք միայն. ավելի մանրամասն խոսվեր շարահյուսական մի քանի կարևոր խնդիրների վերաբերյալ (հատկացուցչի և հատկացյալի շարահաստության, շաղկապների և այլն), մանավանդ որ դրանք համեմատաբար լավ են ուսումնասիրված հայագետների կողմից, պարզվեր, թե ինչու է մեր լեզվի մեջ ժամանակի ընթացքում վերացել է որոշիչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի համաձայնությունը (թվով և հոլովով), իսկ չի վերացել նույն ենթակայի լրացում հանդիսացող բացահայտիչի համաձայնությունը բացահայտյալի հետ, բացատրվեր, թե ի՞նչպես է, որ միջին հայերենի, արևմտահայ ու արևելահայ գրական լեզուների և բարբառների միջև շարահյուսական ընդհանրություններն անհամեմատ շատ են, քան ձևաբանականն ու հնչյունականը։

Պրոֆ. Հ. Կուսիկյանի «Ուրվագծեր հայ գրական լեզվի պատմական շարահյուսության» աշխատությունը մի խոշոր ներդրում է հայագիտության մեջ։ Այն ոչ միայն հաջողված մենագրական ուսումնասիրություն է, այլև առաջին արժեքավոր և առայժմ միակ ձեռնարկը մեր ռեսպուբլիկայի մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար։

Ա. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ